

ԱՐՁԱԿ ԲՈՒՄԱՆԵԱՆ

ԱՐԾՈՒԻ

ԴԱՏԱՍՏԱՆԸ

Լայ  
400

~~88~~

nr<sup>o</sup> 1251 2000

№ 1251

ԱՐՇԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

## ԱՐԾՈՒԻ ԴԱՏԱՏԱՆԸ



692

Արտատպած „ԱՐՉԱԿԱՆՔ“ լրագրից.

1894

3/109

1000

400

46


Հրատարակ. Վահրամ Մուծափեանի

ԱՐՇԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

# ԱՐԾՈՒԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Զրոյց թուղանների կեանքից.

1010  
40892



ՄՈՍԿՈՒԱ

ՏԳԱՐԱՆ Գ. ԲԱՐԹՈՒԻՒԱՐԵԱՆԻ.

1894

(72)

Մ. Բարթուլուկի  
Գրադարանի  
Գրադարանի  
94/10 թուղան 5  
Երևան

Дозволено цензурою. С.-Петербургъ, 22 Мая 1894 г.

# ԱՐԾՈՒԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Типогр. Х. Бархударянъ. Моск. Масницк. д. Ермаков.


28-399



400-1004

# ԱՐԾՈՒԻ ԳԱՏՄԱՆԵՐ

Զրոյց Թռչունների կեանքից



I.

Թռչունների  
մէջ ամենքից  
Տղօրը և ամեն-  
քից իմաստունը

Արծիւն է: Ահա՛ այդ պատճառով

Արծ. Դատաստ.

նա կոչուով է բոլոր թռչունների  
թագաւոր:

Իւր վեհանձնութիւնով ու մեծա-  
հոգութիւնով նա գրաւել էր ընդ-  
հանուրի սէրն ու յարգանքը և նրան  
գրեթէ պաշտում էին բոլոր թռչ-  
ունները: Սակայն՝ ինչպէս առ-  
հասարակ մեծ էակները միշտ մեծ  
թշնամիներ են ունենում, նոյնպէս  
պակաս թշնամի չունէր և հօր Սր-  
ծիւր: Այդ թշնամիները իւր հպա-  
տակ այնպիսի թռչուններն էին,  
որոնք վառ ճրագի շուրջը պտըտող  
ձգուռների նման ջանում էին նրա  
անուան վերայ ստուեր ձգել: Եւ միշտ  
այդպիսի ստոր, գարշակ և նեղ հո-  
գու տէր արարածներն են, որ երբէք  
հանգիստ չեն կարողանում մնալ  
այս և այն բարձրութեան, այս և

այն փառքի առաջ: Սակայն մեծա-  
հոգի Սրծիւր այդ յիմար, ցնորամոլ  
թռչունների վերայ երբէք ուշա-  
գրութիւն չէր դարձնում: Նա իւր  
վեհարանը շինել էր բարձր սարի  
գագաթին, իւր գահը գրել էր այդ-  
տեղ, վեթիսարի լեառը իրան պատ-  
ուանդան առել, իսկ կապոյտ եթե-  
րը հովանոց:

Բայց ովքեր էին նրա հակառա-  
կորդները:

Ոչ բազէն, ոչ սարեակը, ոչ կա-  
րապը, ոչ երգեցիկ արաուաներն ու  
սոխակները, այլ լէշակեր, սև, գար-  
շակ ագուաւը:

Ըմբոստ արարածների ինքնահա-  
ւանութիւնը սանձարձակ է:

Այդպէս սանձարձակ էր և ինքնա-  
հաւան, ամբարտաւան ագուաւը: Նա

Թշնամացաւ Թագաւորի հետ այն պատճառով, որ արհամարհուած և նախատուած էր նրա կողմից, որ իրաւունք չունէր արքունիք գնալու և միւս Թռչունների նման Թագաւորի հետ խօսելու կամ սեղան վայելելու: Իւր յանգագութեան աստիճանն առաւել բարձրացրաւ այն ժամանակ, երբ մինչև անգամ համարձակուեցաւ Թագաւորի աղջկան սիրել և այս ու այն Թռչունների ներկայութեամբ յայտնել, թէ դատարութիւն ունի նրան առնել և Թագաւորի փեսայ դառնալ:

Այդ խօսքը չէր լսել Թագաւոր Արծիւը, ապա թէ ոչ կը ջնջէր ագուանների ամբողջ ցեղը և միանգամայն անհետ կանէր նրանց անունը:

Ագուան աչխատում էր միշտ նմանուիլ Արծուին. Թռչում էր բարձր, սաւառնում էր երկկնքի անսահման տարածութեան տակ, պտոյտներ էր



անում մերթ այս ու այն կողմը և մերթ հանդարտ ձևով սահում, օդը ճեղքելով:

Ի այց ի նշ տարակոյս, որ նա մընում էր միևնոյն տեղը, միևնոյն կողմի և անշնորհք ագուաւը, միևնոյն ըմբոստ և անաղնիւ լէշակերը, որից միայն գարչում էին բոլոր Թըռ-

չունեները, որին ամենաչնչին պատիւ անդամ չէին տալիս և որից միշտ խորշում, խուսափում էին:

Ազոաւի կենակիցը կաշաղակն էր: Իւր սրտի վշտերն ու խորհուրդները միշտ թափում էր նրա առաջ, վրստահ լինելով, որ նա իւր անկեղծ խորհրդապահ ու կարեկից բարեկամն է:

— Կաշաղակ եղբայր, ասաց մի օր ազոաւը, արդեօք ի՞նչպէս անեմ, որ ես նպատակիս հասնել կարողանամ:

— Ի՞նչ նպատակի, հարցրեց կաշաղակը:

— Է՛հ, եղբայր, օրբան մոռացկոտ ես. չասացի՞ քեզ, որ ես մեռնում եմ թագաւորի աղջկայ սիրոյ համար, որ բոլորովին հանգիստ չունիմ Արծուի փառքը տեսնելով, ուզում

եմ ես ևս այդ արքունիքում լինել, ես ևս թագաւորական թիկնապահներով դուրս գալ, առօք - փառօք շրջել աշխարհի այս ու այն կողմերը, թնդացնել սար ու ձոր և բոլոր թռչունների երկրպագութիւնն ու յարգանքը վայելել: Գիտե՞ս, կաշաղակ եղբայր, դու ևս անմասն չես մնալ այդ փառքից. քեզ կընշանակեմ իմ առաջին թիկնապահը և դու կըլինիս ինձանից յետոյ երկրորդը, հետեւաբար և բոլոր թռչունների գլխաւորը:

— Շատ բարի, ասաց կաշաղակը. քեզ կարող եմ տալ հետեւեալ խորհուրդը:

— Ի՞նչ, ի՞նչ, ընդմիջեց անհամբերութեամբ ազոաւը:

— Սպասի՛ր ասեմ: և կաշաղակը  
սուղուեց մոքի մէջ:

— Դէ՛հ, ասա՛, գոռաց անհամբեր  
ագռաւը:

— Սպասի՛ր, սպասի՛ր, հանդարդե-  
ցրեց կաշաղակը և աւելացրեց. դու  
հաւաքիր թարմ լէշերից որքան կա-  
րող ես աւելի շատ, ուրիշ մի քանի  
ընծաներ ևս պատրաստիր, ապա վեր-  
ցրու, գնա՛ ուղղակի արքունիք, նախ  
ներս ուղարկիր նուէրներդ, այնու-  
հետև ինքդ էլ ներս կ'ընդունուիս,  
Այդ ձևով մտերմութիւն կը հաստա-  
տես. երկրորդ, երրորդ անգամ կը  
կրկնես նոյնը և վերջը ամենայն յա-  
ջողութեամբ կը հասնես նպատակիդ:

— Բայց մի՞թէ կարելի է կաշառ-  
քով գործ առաջ տանել:

— Սմեն ժամանակ ամենավերջին  
համբակը կաշառքով հասնում է ա-  
մենարարձր իմաստունի աստիճանին:

— Ուրեմն ես այն ժամանակ կա-  
րող կը լինիմ տեսնել և թագաւո-  
րի աղջկան:

— Այո:

— Կարող կը լինեմ նաև նրա հետ  
խօսել:

— Սնպատճառ:

— Լաւ, շնորհակալ եմ, կաշաղակ  
եղբայր, շնորհակալ եմ քո խոր-  
հուրդների համար. մնաս բարև, ես  
գնում եմ քո ասած պատրաստու-  
թիւնները տեսնել, ասաց ագռաւը,  
թեւերը շարժեց և հեռացաւ:

— Գնա՛, գնա՛, յիմար անասուն, ու-  
րիշ տեսակ չէի կարող քեզ խայ-  
տառակել բոլոր թռչունների առաջ:

Թէև առանց այն էլ  
բաւական խայտա-  
ռակուած ես, ասաց



կաշաղակը, մի կուշտ  
ծիծաղեց և շտապեց  
Թռչուններին յայտ-  
նել ագռաւի դիտաւորութիւնը:

— Մի՞թէ, մի՞թէ, գոչեցին թռչ-  
ունները:

— Այո՛, այո՛:

— Գնա՛նք, գնա՛նք ուրեմն հե-  
ռուից նայենք ու մի տեսնենք թէ  
ի՞նչպէս է ներս ընդունվում կամ  
ի՞նչպէս է խայտառակվում:

— Անշուշտ նրան պիտի բանտար-  
կէ, ասաց կարապը:

— Ի՞մ կարծիքով միանգամայն կը  
խեղդէ, աւելացրեց սարեակը:

— Տեսնենք, տեսնենք. գուցէ սի-  
րով է ընդունելու, գոչեցին մի քա-  
նի այլ թռչուններ:

— Տեսնենք, տեսնենք, աւելացրին  
մնացածները:

Թռչունները շտապեցին դէպի ար-  
քունի ապարանքի շրջակայքը:

Արտուտներն ու սոխակները ու-  
շաղրութեան շառան այդ բոլորը և  
իրանց տեղը հանգիստ մնացին:

Նրանց հետ և ծիծեռնակները զղուելով և հեռանալով այդ բուրից, իրանց անուշիկ դայլայլիկները հնչեցնելով, ներգաշնակ առուների խոխոզիւնների և ծառերի անոյշ շքրչիւնների, բնութեան հրաշալիքների գրկում առօրեայ հոգսերն էին աշխատում, ձագուկներին կերակուր փատակում, և անվրդով հոգով, առանց փնաս հասցնելու մէկին կամ միւսին ջանում էին իրանց զուակների դաստիարակութիւնը առաջ տանել:

Արծուի ապարանքից քիչ հեռու խառնիճաղանձ ձայներով, հոհոցներով ու քռքոցներով, անհոգ թռչուններն անհամբեր սպասում էին ագռաւի դալուն, Արծուի այցելելուն և նրա արած գատաստանին:

Վերջապէս ագռաւը երևաց, նրա հետ էին և ընծաներով բեռնաւորուած մի քանի ագռաւներ:



Օդի մէջ արձակ պտոյտներ անելով եկաւ և կանգնեց Արծուի ապարանքի առաջ:

Ապարանքի շեմքում կանգնած էին երկու սրտոտս բաղէներ: Ագռաւը նախ մտտեցաւ նրանց, գլուխ

խոնարհեցրեց և խնդրեց, որ յայտնեն Արծուին իւր գալու մասին.

— Ի՞նչ գործ ունիս, հարցրեց բազէներին մէկը:

— Մի շատ կարևոր գործ, որ անյապաղ պէտք է յայտնեմ թագաւորին, որով մեծ շահ պիտի հասցնեմ նրան. խնդրեմ այսպէս էլ նրան յայտնէք. ձեզ ևս չեմ մոռանալ:

— Շատ լաւ, ասաց համեստ բազէն և գնաց յայտնեց թագաւորին:

Քանի մի ըրպէից ագուաւը ներս ընդունուեցաւ, Չոքեց նա Արծուի առաջ և հազար անգամ զղջաց իւր ամբարտաւանութիւնը և ներումն խնդրեց նրանից:

— Շատ բարի, ասաց Արծիւը հեղ և քաղցր ձայնով. բայց ո՞վ է քեզ որ և է չարչարանք սպառնացել, ո՞վ է խնդրել, որ գաս և ներումն խընդրես ինձանից, և ի՞նչ նշանակութիւն ունի քո այստեղ գալը: Գնա՛, գնա՛ և ապրի՛ր քեզ համար, ինչպէս մինչև այժմ ապրել ես. ես ո՛չ մի պահանջ չունիմ քեզանից, ոչ մի նեղութիւն կամ չարչարանք տալու միտք չունիմ:

Ագուաւը շիտթուեց այս խօսքերը լսելով, գլուխը կորացրեց և մնաց լուռ:

— Ես լաւ գիտեմ, խօսեց Արծիւը, որ անձնապաստան և ամբարտաւան էակը երբէք պարզ երես չէ կարող ունենալ. դու շատ անգամ յանգրգնել ես ինձ վնաս հասցնելու,

ինձանից բարձր ձևանալու, բայց ե մեծահոգութեամբ այդ բոլորը ներում եմ քեզ քնա, միայն աշխատիր բնաւորութեամբ փոխուել, աշխատիր թողնել կոյր եսամոլութիւնը, սանձարձակ ինքնահասանութիւնը, աշխատիր ճանաչել պատուի և յարգանքի չափը: Գորտերն էլ ուղեցին եղներին նմանուիլ, չէ՞ որ տրաքուեցին և պատառ-պատառ եղան, դու ևս նոյնն ես ուղում անել, բայց դու ինքդ քեզ պատառ-պատառ կ'անես և ոչ ես. ես միշտ ներումն եմ շնորհել քեզ և կը շնորհեմ մինչև վերջը. սակայն վայ նրան, որ իւր կեղտոտութեան չափը միանգամից անց կ'ացնէ. այն ժամանակ մահ, անարգ մահ այդպիսիներին. . .

400-2809  
 108201  
 108201

— Ես և իմ բոլոր ցեղը քեզ հլու և հնազանդ ենք, քո խոնարհ ծառաներն ենք, քո ստրուկները, մեր գլուխը միշտ դրած է քո ոտքերի տակ, մեր աղօթքի միտքը, մեր բաղձանքը քո կեանքն է, քո առողջութիւնն է, քո փառքի մեծութիւնն է: Ո՞վ կարող է մի չնչին վատութիւնն ըղձալ քեզ համար, ո՞վ կարող է դէպի քեզ շանթել որևէ անվայել խօսք. և ահա խոնարհ ծառագ ոտքերիդ տակն ընկած խընդրում, աղերսում է չ'մոռանալ ագռաւների ցեղը, չ'մոռանալ իւր խոնարհ և ուշիմ հպատակներին: Վըստահ եղիր, տէր իմ, որ դէպի քեզ ունեցած յարգանքս, համակրանքս, անձնուիրութիւնս, խոնարհ և հլու հպատակութիւնս անկեղծ, ճշմարիտ

Արծ. Դատաստ.



և անարատ են. և արդ՝ յանդգնեցի,  
տէր իմ, իմ քրտինքի պտուղներից  
բաժին արկանել քո ոտքերի տակ.  
Հրամայեցէ՛ք ընդունել այդ, բեռ-  
նաւորուած եղբայրներս գրուով ըս-  
պասուով են հրամանիդ:

— Ի՞նչ բաժին, խրոխտաց Արծի-  
ւը. ո՞վ է քեզանից բաժին պահան-  
ջել, ի՞նչիս են պէտք քո քրտինքի  
պտուղները...

— Ահա՛, այդ արդէն ապացուցա-  
նում է, որ ձեր՝ ազգաւանների հոգին  
դեռ նեխուած է և ապականուած.  
այդպէ՞ս էք սիրում դուք գրաւել  
ձեր մեծերի սիրտը, այդպէ՞ս էք ցշց  
տալիս ձեր դործերի և առտնին նիստ  
ու կացի սրբութիւնն ու ճշմարտու-  
թիւնը: Սրտացաւ թագաւորի և առ-  
հասարակ անկեղծ պետերի սրտերը

այդ կերպով շահում են լոկ փծուն  
ստրկահոգիները, ճիճուի նման ստո-  
րաքարչները: Գործ, անարատ գործ,  
վեհանձնութիւն, անվեհերութիւն,  
քաջարի վարմունք տուէք ինձ, որ  
կարենամ հաշուել ձեզ իբրև սըր-  
տակից հպատակներ, իբրև ժողովրդի  
ազնիւ անդամներ, հեռօ՛ւ այդ կեղ-  
տոտ փաղաքշանքները, այդ նեղ  
փայտայանքները. այդ վայել չէ Ար-  
ծիւ թագաւորին, այդ անպատու-  
թիւն է ինձ. բայց և այնպէս ե՛կ  
և քո բեռները ցոյց տուր:

Արծիւը դուրս եկաւ, կանգնեց  
պալատի առաջ, բազէները պատս-  
պարեցին նրա աջ ու ձախ կողմերը  
և թագաւորի հրամանով առաջ ե-  
կան բեռնաւորուած ազգաւանները,

որոնք կանգնած էին ապարանքից քիչ հեռու:

Ազոաւի սիրտը ալեկոծուած ծովի նման մռնչում էր, աշխարհը սեւացաւ նրա աչքերի առաջ: Գլուխը պտոյտում էր և հազիւ էր իրան պահում: այս ի՞նչ դատաստան է, ասում էր ինքը իւր մտքում, և լուռ բերանը մերթ բաց էր անում, մերթ ծածկում:

— Կանչեցէ՛ք այստեղ այդ սեւեւ բեւեռներին, գոչեց թագաւոր Արծիւը:

Թռչունները, որոնք հեռուից նայում էին, այդ անամօթ պատկերները տեսնելով, թէպէտ շատ խրնդացին, սակայն Արծուի խրոխտ ձայնից էլ սաստիկ սարսեցան:

Բեռնաւորուած ազոաւները մօտեցան Արծուին: Նա նախ հրամա-

յեց խուզարկել բեռները և ինչ որ կայ բաժանել աղքատներին և ապա դարձաւ ազոաւին, որ կորագլուխ կանգնած էր իրանից քիչ հեռու, ասաց. — Այսպէս է, յարգելի ազոաւ, իմ դատաստանը. լա՛ւ իմացիր, որ ես թագաւոր գոլով այսպիսի իրերի կարիք չունիմ: Խոստովանուի՛ր, որ դու սորանով չես ուզեցել իմ պակասը լրացնել, իմ սիրտը շահել, այլ երեւակայել ես, թէ քո նեղ հոգւով և կարծ հայեացքովդ դու կարող ես ինձ կաշառել: Ո՛չ, այս անամօթութիւն է քեզ համար, քեզ շնորհակալութիւն չեմ ասիլ և պատուով քեզ հրաժեշտ չեմ տալ, գնա՛, և եթէ ինձ համար ընծայ բերելու կարողութիւն ունիս, տար և ինքդ բա-



ժանիր աղքատներին, այն ժամանակ  
դու կ'արժանանաս իմ շնորհին, ա-  
պա թէ ոչ՝ միւս անգամ այլևս  
չերևաս իմ աչքին:

Ամօթից ճնշուած ազուաւը հե-  
ռացաւ: Թռչունները հեռուից ու-  
րախացած ձիչ արձակեցին, հազար  
ու մի ծաղը ու ծանակ արեցին, սա-  
կայն ազուաւը առանց ուշադրու-  
թեան անցաւ, ցնաց կաղնու ձիւղի  
վերայ կանգ առաւ և սուզուեց ծանր  
մտքերի մէջ:

Կաշաղակը թռչուններից ազատ-  
ուելով, նորնոր լուրեր իմանալու  
համար թռաւ ու հասաւ ազուաւին  
և որպէս թէ ոչինչ չգիտէ, ուրախ-  
ուրախ մտեցաւ և քաղցր ձայնով  
ասաց. — Անպատճառ, սիրելի եղ-  
բայր, թագաւորը քեզ սիրով ըն-

դունել է. ահա բոլորն էլ նախան-  
ձից տրաքուում են, իսկ ես շատ և  
շատ ուրախ եմ:

— Մի՞թէ, գոչեց ազուաւը, իւր  
տրտմութիւնը ծածկելով, մի՞թէ բո-  
լորն էլ իմացան, որ ես արժանացայ  
թագաւորի սիրոյն և յարգանքին,  
մի՞թէ իմացան և այն, որ ես ար-  
դէն թագաւորի աղջկայ հետ ևս  
տեսակցութիւն ունեցայ, որ դուցէ  
և շուտով կայանայ մեր պսակը:

— Ի՞նչպէս չէ. բոլորն էլ գիտեն,  
և բոլորն էլ նախանձից տրաքուում  
են. բայց ես շատ ուրախ եմ, ազ-  
ուաւ եղբայր, հաւատա՛, անշափ ու-  
րախ եմ:

— Օ, սիրելի կաշաղակ, ես չեմ  
կասկածում քո աղնութեանը, ես  
գիտեմ, որ դու իմ բարեկամն ես

և անկեղծ բարեկամը. խնդրեմ այսօր ճաշին ինձ մօտ մնա: Խնդրեմ նոյնպէս, ամեն անգամ երբ որևէ կարիքի մէջ լինիս, ինձ գիմիր. դու



գիտես, որ ես ժլատ չեմ, խնայող չեմ, մանաւանդ շահասէր չեմ: Իսկ երբ արժանացայ և թագաւորի աղջկան, այն ժամանակ, հաւատա՛, դու իմ առաջին թիկնապահն էր լինիս:

Ինչ ասել կուզէ, որ կաշաղակը այս բոլորի վերայ ծիծաղում էր իւր մտքումը. նա արդէն ամեն ինչ գիտէր, ուստի և չէր կարող չըծաղրել անմիտ ագռաւին, սակայն նա իւր կեղծ գովգովներն ու ճոճոան գրուատումները թափեց ագռաւի գլխին լոկ իւր շահերն աչքի առաջ առնելով: Նոյն օրը նրա մօտ կուշտ ճաշեց և խորին շնորհակալութիւն միայն յայտնելով հեռացաւ:



II.

ի անգամ  
Արծիւը, ա-  
ռանց ում և  
իցէ բան ա-  
սելու, գնաց,  
անհետ ա-

ցաւ և ոչ որ չիմացաւ թէ՛ ուր:

Երկար ժամանակ նրա մասին լուր  
չեղաւ և բոլորն ընկղմուեցին խոր  
սգի մէջ: Նրա փոխանորդը, որ ինչ-  
պէս միշտ ինքն էր նշանակում, ա-  
ւագ Բաղէն էր, որ և փոքր Բաղէի  
հետ արքունական գործերի ղեկն առ-  
նելով իւր թևերի տակ սկսեց կա-  
ռավարել իշխանութիւնը:

Արտասուքը չէր սպառվում Ար-  
ծուի աղջկայ ու որդոց աչքերից:  
Ամեն ժամ նրանց բերանից տխուր  
և աղէկտուր ձայնով՝ «Տայրի՛կ,  
Տայրի՛կ» բառերն էին լսոււմ, որոնց  
և ձայնակցում էին բաղէները և հե-  
ռուից արտուտներն ու սոխակները:

Կաշաղակն այդ լուրն իսկոյն ի-  
մացաւ և շտապեց ամենքին յայտ-  
նելու, սակայն չզլլացաւ նախ և ա-  
ռաջ ագռաւին հաղորդելու:

Ագոաւի ուրախութեանը սահման չընկար և՛ ահա մոտածեց օգտուել առիթից, առաւել բազէների անսահման բարեսիրտութիւնից:

Բազէները բարեսիրտ էին, սակայն ծայրահեղ բարեսիրտ: Նրանք շուտ հաւատում էին ամենքին:

Ագոան շտապեց փառաւոր նուէրներով սլանալ Բազէների մօտ: Գնաց և ջերմ վշտակից հանդիսացաւ, եզուիտի պէս լաց եղաւ Արծուի համար, ապա յայտնեց իւր պատրաստակամութիւնն արքունական ծառայութիւն մտնելու: Մեծ-մեծ խօսեց, խոստացաւ արքունիքին մեծ-մեծ շահեր հասցնել, չզլացաւ նաև ստել, որ Արծուից էլ արգէն խօսք է առել արքունական ծառայութիւն մտնելու:

Բազէները շուտ չխաբուեցին. ագոաւի ընծաները թէև ընդունեցին, բայց չխոստացան արքունիքում ծառայութիւն տալ: Այնուամենայնիւ սիրով վարուեցին հետը և սիրով ճանապարհ ձգեցին նրան:

Այդքան էլ բաւական էր ագոաւին: Նա այնուհետև սկսեց յաճախ այցելել արքունիքը: Առաջ շաբաթական երկու, երեք անգամ գնաց և վերջն սկսեց ամէն օր յաճախել: Կամաց-կամաց ծանօթացաւ և արքունիքի ներքին գործերի հետ: Մի գեղեցիկ օր էլ, յարմար առիթ գրտնելով, լացով, արտասուքով ներկայացաւ թագաւորի աղջկան, խորին ցաւակցութիւն յայտնեց թագաւորի հեռանալու մասին, ապա օլիմպիական խոստումներ թափեց նրա ա-

առջ, հայհոյանքով նշաւակեց բազմաթիւ թռչունների և յաւականութեամբ ասաց, որ ինքը անշուշտ կ'որոնէ թագաւորին և անյապաղ կրգտնէ նրան:

Թագաւորի աղջիկը շնորհակալութիւն յայտնեց և աւելացրեց, որ ինքը ապերախտ չի գտնուիլ, իւր կողմից կըհասցնէ այդ լաւութիւնների փոխարէնը և եթէ արժանանայ իւր հօր ներկայութեան, անշուշտ կրինդրէ նրան՝ ազոաւին արքունիքում պաշտօն տալ:

Ազոաւն ուրախութիւնից քիչ էր մնում, որ խելագարուի: Ինչ բաղդ, ինչ օսկէվառ ըոպէներ, ինչ երջանկութիւն. թագաւորի աղջիկը խօսեց իւր հետ և անգամ յայտնեց, որ նա միջնորդ կըգառնայ իւր

հօրը՝ իրան արքունիքում պաշտօն տալու:

«Շատ լաւ, ասաց ազոաւը իւր մտքում, բաղդս բացւում է, ես անշուշտ կ'արժանանամ նրա սիրոյն, և նա այլևս հայր չի տեսնիլ. ես գիտեմ, որ նրա հայրը անշուշտ վանդակի մէջ է. գիտեմ որ գերուած է թուրք որսկանների մօտ, որ և այլևս արքունիք չի գալ: Օ՛ն, ուրեմն իմ հարսանիքը աշխարհ պիտի թընդացնէ, բոլոր թռչունները պիտի գան և խոնարհուին իմ առաջ. բոլորի պետը և մեծաւորը պիտի լինիմ: բա՛ղդ, բա՛ղդ, և զնորքներով սաւառնած ազոաւն այդ վերջին խօսքերն այնպէս արտասանեց, այնպէս գոռգոռաց, որ կաշաղակը հեռուից լսեց և իսկոյն շտապեց նրա մօտ:

— Ի՞նչ կայ, ագռաւ եղբայր:

— Բա՛ղդ, բա՛ղդ, կրկնեց ագռաւը ուրախացած և մի առ մի նկարագրեց այն ծրագիրները, ինչ որ ինքը կազմել էր իւր երևակայութեան մէջ:

Կաշաղակը նախ իւր կեղծ ուրասութիւնը յայտնեց նրան, փարիսեցիական բարեմաղթութիւններ արաւ և ապա առանց յայտարարելու, շտապեց բոլոր թռչուններին հաղորդելու:

Թռչունները լաւ տեղեկանալով, որ ագռաւն ազատ մտաք ունի արքունիքում, վրդովուեցան և վճռեցին մի կերպ արդելք լինել դրան:

Մասնաւոր ժողով կազմեցին և խորհուրդ տեսան, որ մի երկու մարդ ընտրեն իրանց միջեց, ուղարկեն փոխ-

արքայ Բաղէի մօտ և յայտնեն, որ նա մի հրահանգ ուղարկէ բոլոր թռչուններին, թէ ի՞նչ ձևով պէտք է ղեկավարել ժողովուրդի գործերը և թէ՛ ի՞նչ ձևով են արքունիքում բոլոր գործերը տեսնուում:

Այդպէս էլ շուտով կատարեցին: Սակայն Բաղէն պարզ չհասկացաւ նրանց խօսքը և լուութեան տուաւ բոլորը:

Ասել է թէ՛ ագռաւի բաղդը միանգամայն փայլում էր: Նա յաճախ էր տեսնում թագաւորի աղջկան և արդէն բաղդ է ունեցել մի քանի անգամ ճաշել նրա հետ:

Բաղէները շատ չէին սիրում շարունակ մնալ արքունիքում: Բնութեան ազատ որդին չէր կարող երկար նստել մի տեղ, թէպէտ արքայա-

կան դահ լինէր: Արծուի կարօտը մահում էր Բաղէներին, սրտի մէջ բերաւ որ վշտեր անդուլ պայքարից հանդիստ չէին առնում և նրանք կամեցան սրտի պղ բոլոր զեղմունքը թափել ընդ թեան գրկում: Մի քանի օրով արքունիքի գործերը յանձնեցին իրանց մտերիմներին, իսկ իրանք գնացին անցան լեռներ, գետեր, ձորեր ու դաշտեր, մտածելով մի գուցէ կարողանան տեսնել իրանց թագաւորին:

Սակայն բազը չէր ժպտում նրանց. ուր էլ անցնում էին, հանդիպում էին խոչնդոտների: Քանի՛քանի անգամ ազատուեցին որսորդների անխիղճ ճանկերից, ո՛րքան նեղութիւն, ո՛րքան տանջանքներ կրե-

ցին, բայց չկարողացան իրանց թագաւորին տեսնել:

Մի օր յոգնած, յուսակտուր նըստած մի թփի վերայ և սուղուած մտքերի ուղիւնոսը, երևակայում էին իրանց հայրենիքը, իրանց թագաւորն ու նրա փառքը և աչքերից կաթ-կաթ արտասուք գլորում: Նրանց հառաչներին արձագանք էին տալիս լոկ ապառաժները, իսկ սրտի վշտերին ձայնակցում էին առուների մեղմիկ կարկաչունը և ծառերի տխուր սօսափունը:

Այդ տխուր վայրկենին երկու հըզօր ձեռներ բռնեցին նրանց:

Նրանք բարձր ճիչ արձակեցին և ձայները խեղդուեցին կոկորդում: Նրանք գերի գնացին, ոտքերը շղթայեցին և նրանք անարգ պատուի հասան:

Անպատուութիւնը հասցրին այն աստիճանի, որ նրանց անձնատուր լինելուն և հանգիստ մնալուն ոչ մի վտահուութիւն չունենալով, նրանց ոտներին փոքրիկ դանգակներ շարեցին, որ ամեն թռիչքներն ու շարժուածքներն իսկոյն իմացուի:

Թռչունները երկու օր սպասելով և բազէներին ևս չտեսնելով սաստիկ վարանման մէջ ընկան:

Ազուան առօք-փառօք նստել էր արքունական պալատում և գրեթէ բոլոր գործերի ղեկը առել իւր ձեռքը:

Մի օր էլ նա իւր ճանկն էր գըցել թագաւորի աղջկան.— Մի' սպանիր ինձ ասում էր նա նրան. ես մեռնում եմ սիրոյդ համար... Եկ, անձնատո'ւր եղիր: Մի' երկմտիր, ես

կը վարեմ հօրդ իշխանութիւնը և վտահ եղիր, որ պարզերես կը լինիմ աշխարհի առաջ, և այդպէս որքան ակողմեղ խօսքեր ասես, որ նա չլծափեց թագաւորի շուարած աղջկայ առջև:

Թագաւորի աղջիկը շատ հասկացող էր և անչափ խելօք: Նա լաւ գիտէր, որ հակառակելով աւելի կը կատաղեցնէր այդպիսի գարշակներին, ուստի նա նրա հետ սիրով և հեղութեամբ խօսեց.— Նս սիրով ընդունում եմ քո ասածները, սիրելի ազուա. ես քեզ չեմ ատում, բայց սպասիր յարմար ժամանակին, այժմ բոլոր թռչունները իրարանցով են ընկած. նրանք կարող են վնասել, ուստի սպասիր յարմար առիթին:

Շուտ խաբուող ագռաւը պսքա-  
նով էլ բաւականացաւ և շնորհա-  
կալութիւն յայտնելով հեռացաւ:

Ճանապարհին պատահեց կաշա-  
ղակին և այս բոլորը պատմեց նրան:  
(Ես կարծում եմ, որ խնդրած էլ  
կը լինի, որ կաշաղակը այդ խոստո-  
վանք պահէ):

Քիչ ևս խօսելուց կաշաղակը հե-  
ռացաւ և շտապեց հաղորդելու թրո-  
չուններին: Թռչունները սաստիկ  
յուզուեցին և բոլորն էլ խաբուե-  
լով միասին գնացին դէպի ապա-  
րանք:

Նրանք գնացին գործի ճիշդ եղե-  
լութիւնն իմանալու և ըստ կարելոյն  
խոչնդոտ լինելու: Հասան ապարան-  
քին և շեմքում կանգնած սպասա-  
ւորի միջոցով յայտնեցին թագա-



ւորի աղջը-  
կան իրանց  
գալու մա-  
սին: Թագա-  
ւորադն աղ-  
ջիկը լսելուն  
պէս անչափ  
ուրախացաւ  
և սիրով բո-  
լորին ներս  
ընդունեց:  
Նրան աւելի  
մօտ նստե-  
ցին արտուտ-  
ներն ու սո-  
խակները և

ապա շարքով մնացածները:

— Ի՞նչ պատահեց, որ այդ անպիտան ագուան այստեղ ապաստան գտաւ և մինչև այսօր էլ պինդ նրստեց, հարցրեց տոխակը:

— Օ՛հ, այդ մի.ք հարցնիլ, խօսեց թագաւորի աղջիկը. ես գժուած եմ, աշխարհը իմ առաջ սև է, խաւար է, մահճը ինձ համար այս րոպէին քաղցր է, ես այստեղ իմ հօր ապարանքում կատարեալ գերի եմ: Այդ անիրաւը, այդ հոտած լէշակերը քանդեց այս տունը, ոտնատակ արաւ ամեն ինչ: Նա իւր մտքում արդէն վճռել է, որ հայրս չի գալու և ինքն է այս գահը բազմելու. ա՛խ, իմ անոյշ հայրիկ, հառաչեց թագաւորազն աղջիկը և արտասուախառն շարունակեց. իմ քաղցր, իմ պահապան հայրիկ. ո՞ր ես, ո՞ր...

— Ո՞ր ես, ո՞ր, ձայնակցեցին նրան բոլոր թռչունները:

— Այո՛, շարունակեց թագաւորի աղջիկը. այդ անղգամն այն կէտին հասցրեց որ ինձ ամուսնութիւն առաջարկեց:

— Անիրա՛ւ, լի՛րբ, գոչեցին բոլոր թռչունները:

— Ահա տեսնում էք, ես որ ասում էի չէիք հաւատում, խօսեց կաշաղակը:

— Նա պիտի խեղդուի, նա պիտի անհետանայ, գոռացին աւելի բարկացած և յուզուած թռչունները:

— Եւ ես, շարունակեց թագաւորի աղջիկը, աշխատեցի նրան չհակառակեցնել, վախեցայ աւելի մեծ վնասներ հասցնէ: Սպասում եմ ան-

Համբեր՝ արդեօք կըտեսնե՞մ իմ  
կարօտելի Հայրիկին:

— Կըտեսնենք, կըտեսնենք. դռնե-  
ցին թռչունները:

— Այժմ մեզ հարկաւոր է ընտ-  
րել մէկին, որ կառավարէ մեր ար-  
քունիքը և ղեկավարէ արքունական  
բոլոր գործերը և ագուաւին պէտք  
է այստեղից բոլորովին հեռացնել,  
այսպէս խօսեց արտուտը:

— Այո՛, այո՛, պէտք է հեռացնել,  
աւելացրեց կաշաղակը:

— Ոչ, մենք կարող ենք մի զօրեղ  
կառավարիչ ընտրել և ագուաւին էլ  
թողնել իւր պաշտօնում, այսպիսի  
ներք միջոցներում նրան կատաղեց-  
նել աւելորդ է. սպասենք մինչև մի  
լուր իմանանք մեր թագաւորից և  
մեր սիրելի բաղէներից, Այս խօսքե-

րը սարեակը դեռ չէր վերջացրել,  
յանկարծ լսուեցաւ ծիծեռնակների  
ուրախ երգերը, որոնք իրանց քաղցր  
երգերն ու աւետիքները շարունա-  
կելով ներս մտան:

— Բարև ձեզ, սիրելի եղբայրներ,  
գոչեց ծիծեռնակների աւագը, խոր  
գլուխ խոնարհեցնելով թագաւորի  
աղջկան և ապա բոլոր թռչուններին:

Թէ թագաւորազն աղջիկը թէ  
բոլոր թռչունները գլուխների տը-  
խուր երերմունքով և թախծալի  
Հայեսացքով պատասխանեցին նը-  
րան:

— Ի՞նչ է պատահել ձեզ, ինչո՞ւ  
էք տխուր, ի՞նչ է նշանակում այս  
բոլորը, Կարելի բան է՞, որ մեր ցե-  
ղից մէկին տեսնել և չուրախանալ:  
Չգիտէք, որ մենք բացի ուրախ լու-

րից և քաղցր աւետիքից ոչինչ չունինք:

Այս խօսքի վրայ թուշուռները ոգևորուեցին:

— Ի՞նչ լուր, ի՞նչ աւետիք ես բերել, գոչեցին նրանք:

— Վեր կացէք, դո՛ւրս եկէք, դիմաւորեցէք թագաւորին, ահա նա գալիս է:

— Հայրի՛կը, ճչացին բարձր ձայնով թագաւորի աղջիկը և մնացած որդիքը:

— Թագաւոր՛ը, ճչացին բոլոր թուշուռները:

— Ծշմարի՛տ, ծիծեռնակ եղբայր, նա գալիս է:

— Այո՛, այո՛:

Թագաւորի աղջիկը չհամբերեց, Իսկոյն նետուեց դուրս:

Նոյնը արին և բոլոր թուշուռները: Քանի մի բոպէ չանցած երևաց թագաւորը:

— Հայրի՛կ, գոչեցին աղջիկն ու որդիքը և ընկան նրա գիրկը:

— Հայրի՛կ, ձայնակցեցին բոլոր որդիքը և մօտեցան նրան:

Նա ուրախ և անյապ կարօտով գրկեց բոլորին, ապա խորին հետաքրքրութեամբ հարցրեց նրանց առողջութիւնը, նրանց դրութիւնը:

— Ո՛ւր էիր, հայրի՛կ, հարցրեց աղջիկը անհամբերութեամբ:

— Ո՛ւր էիր, տէր իմ, լուուեց ամեն մի թուշուռի բերանից:

— Թշնամիների վանդակում: անահնկալ կերպով ես գերի ընկայ, բայց փառք Աստուծոյ, ահա՛ նորից այստեղ եմ:

— Փառք Աստուծոյ, գոչեցին բո-  
լոր թռչունները:

— Հա՛, խրոխտաց յանկարծ Ար-  
ծիւր, բայց ո՞ւր են բազէները:

Թռչուններն սկսեցին արտասուել:

— Ի՞նչ է պատահել, ասացէ՛ք  
շուտով:

— Երկար ժամանակ է, որ նրանք  
չկան, խօսեց արտասուախառն ձայ-  
նով սոխակը. գերի են ընկել, վախ-  
ճանուած են թէ կենդանի, չգի-  
տենք. ես իմացայ, որ նրանք գնում  
էին քեզ աղատելու:

— Ինձ աղատելո՞ւ, Արծիւր սու-  
զուեց ծանր խոկմունքի մէջ: Եւ ինձ  
աղատելու համար իրանց անձը մատ-  
նեցին թշնամիների ձեռքը: Մնացէ՛ք  
այստեղ բոլորդ էլ, մնացէ՛ք և ըս-  
պասեցէ՛ք մինչև իմ գալը: Եթէ

երեք օրից յետոյ չերևացի, իմացէ՛ք,  
որ կորած ենք և մենք և դուք և  
մեր բոլոր թագաւորութիւնը:

Դուրս եկաւ Արծիւր իւր ապա-  
րանքից, չլսեց կարծես նրա ետեկց  
աղիողորմ ձայնով կոչուող «հայ-  
րի՛կ, հայրի՛կ» բառերը, սլացաւ  
դէպի վեր, անցաւ լեռներ, ձորեր,  
անցաւ շատ ու շատ քաղաքներ, մը-  
տաւ թաւ ծմակները, դիտեց այս և  
այն որսորդներին և չգտաւ իւր անձ-  
նուէր, իւր հաւատարիմ Բազէներին:

III.



րծուի բաց կայու-  
 թեան երրորդ օրը  
 մթնեկու վրայ էր:  
 Մի քաղաքի մօտ,  
 անտառից դուրս  
 ընդարձակ դաշտով  
 գնում էր ձիու վը-  
 րայ մի թուրք առատ զինւորուած



և շրջապա-  
 տուած բա-  
 րակներով:  
 Զախձեռքին  
 տանում էր  
 շղթայակապ  
 Բաղէներին:  
 Արիւնը բոր-  
 բորուեց Ար-  
 ծուի գըլ-  
 խում: Քանի  
 մի պտոյտ-  
 ներ արաւ օ-  
 զի մէջ, սա-  
 ւառնեց դէս  
 ու դէն և մի  
 բարձր ձիչ  
 արձակեց:

Բազէներն այդ լսեցին: Նայեցին շորս կողմը և Արծուին տեսնելուն պէս թուան դէպի նա, բայց մնացին թուրքի ձեռին կախուած: Նրանց ոտքերը շղթայուած էին: Արծիւը թևերը տարածեց և «քա՛ջ կացէք, բազէներ» գոչելով, կապոյտ եթերից կայծակի արագութեամբ թուա դէպի թուրքը:

Երկիւղից գողալով, թուրքը կամեցաւ հրացանն արձակել, սակայն շիոթուեց և ձեռքից վայր ձգեց: Այդ միջոցին Բազէները քանդեցին իրանց ոտքի շղթաները, ընկան դէպ իրանց թռչող Արծուի գիրկը և այնպէս գրկախառն անցան, անհետացան սարի ետևը և նոյն գիշերը հասան իրանց ապարանքը:

Թռչունների ուրախութեանը սահման չկար: Ի՛նչ բաղդ, ի՛նչ երջանկութիւն: Պալատի գլուխն են անցած կորցրած «հայրիկը» և իւր գործօն ընկերները: Ի՛նչքան կերուխումներ ու հանդէսներ սարգուեցին, ի՛նչքան նուէրներ ստացան աղնիւներն ու հաւատարիմները:

Սակայն թագաւորադն աղջիկը չզլացաւ իւր հօրը՝ ներկայութեամբ բոլոր թռչունների, պատմել ագռաւի յախուռն վարմունքը, գարշելի նիստուկացը և արքունական գործերի աւերումն ու կործանումը:

Արծիւը նորից բորբոքուեց:

— Դատաստան, արդար դատաստան, գոչեցին թռչունները:

— Կանչեցէ՛ք այդ անիրաւին այստեղ, գոչեց հզօր Արծիւը և շարունա-

կեց. կանչեցէք, թո՛ղ գայ և բոլոր  
թռչունների ներկայութեամբ առնէ  
իւր պատիժը: Քանի՛-քանի անգամ  
ես ներել եմ նրան, ես շատ քիչ  
եմ տեսել նրան, երբէք ուշագրու-  
թեան չէի առնում նրա ամեն մի  
ժպիրճ վարմունքը, միշտ մեծահո-  
գութեամբ եմ վարուել նրա հետ.  
սակայն այժմ՝ այլ ևս ներել ան-  
կարող եմ, այժմ ասել է թէ՛ սահ-  
մանից, չափից անցկացաւ. նա ար-  
ժանի է անարգ պատժի. կանչեցէք  
շուտով այստեղ այն գարշակին:

Թռչունների ուրախութեան աս-  
տիճանը եօթներորդ երկինքը հա-  
սաւ:

Կաշաղակների ցնծութիւնն էլ  
աննկարագրելի էր:

Թէև նրանք խօսք էին տուել ագ-  
ռաւին, որ պաշտպանեն թագաւորի  
առաջ, թէև միշտ նրան ցոյց էին  
տուել իրանց իբրև մտերիմներ և  
ամեն դէպքում համախոհներ, թէև  
նրանք նրան յայտնել էին անձնուի-  
րութիւն, բայց ո՞վ չիմացաւ կաշա-  
ղակի բնաւորութիւնը, որի արածը  
բոլորը առերես էր և որ միշտ ա-  
տում էր ագռաւին:

Արծիւք բազմեց իւր գահը: Բա-  
զէները աջ ու ձախ նստեցին:

Պահապան թռչունները շրջապա-  
տեցին նրանց:

Եկաւ ագռաւը կորագլուխ, սրտա-  
տրոփ, գողալով, եկաւ սև քրտինք  
երեսը պատած. ցերեկը նրան գի-  
շեր էր թւում, լոյսը խաւար: Սա-  
րերն ու ձորերը պտոյտում էին

նրա գլխին: Կանգնեց և մնաց լուռ  
երերալիս:

— Դու, ո՛վ գարշելի, դու, ստո-  
րաքարչ ճիճու, առիթ գտար լըբու-  
թիւնդ յառաջ տանելու և սրիկա-  
յութիւնդ ի կատար ածելու: Հասար  
նպատակիդ, արքունիքից արհամար-  
հուած ու աշխարհից ատուած, նա-  
խատուած գարշակ: Մեռած կար-  
ծեցիր ինձ, անդարձ հաշուեցիր բա-  
ղէներիս, դու, ո՛վ դաժան աւաղակ,  
ժպրհեցիր մինչև անգամ իմ ընտա-  
նիքի պատիւը արատաւորել, յաւակ-  
նեցիր արքունական գործերը ձեռք  
առնել, համարձակուեցիր անգամ  
իմ գահը բարձրանալ և իմ հաւա-  
տարիմ հպատակներիս ձեռքիդ խա-  
ղալիք շինել: Դու, լպի՛րջ, անիրաւ,  
չկարծեցի՞ր, որ այսպէս մի օր կա-

րող էի երևալ, կամ մի օր իմ հը-  
պատակներս կարող էին ոսկորներդ  
փոշու հետ հաւասարեցնել: Խօսի՛ր,  
անառակ, արդարացի՛ր, եթէ կա-  
րող ես:

Սգուաւը ձայն չէր հանում: Նա  
ուշքը կորցրել էր: Հասկացաւ նա  
իւր զղուելի վարմունքը, գուցէ զըղ-  
ջաց էլ իւր մէջ, բայց արդէն ուշ  
էր: Մահը նոյն րոպէին նրա համար  
շատ քաղցր էր, բայց նա էլ չէր  
գալիս:

— Տարէ՛ք, գոչեց Արծիւը, քան-  
դեցէ՛ք շուտով դրա փետուրները,  
մերկացրէ՛ք, տարէ՛ք և ձգեցէք մուկ  
բանտի մէջ մինչև իւր մահը, թո-  
ղէք տանջուի այնտեղ, թողէ՛ք որ  
օրինակ լինի այդ բողբոջ համար,  
սեսնեն և իմանան, որ արգար թա-

գաւորի դաւաճանն արժանի է ա-



Նարդ մահուան:

Բոլոր թռչունները սառսուցին:  
Առաջին անգամն էին տեսնում Ար-  
ծուի այդպիսի դատաստանը:

— Ո՛րքան ծանր է դաւաճանու-  
թիւնը, անում էին նրանք. մեր թա-  
գաւորը բարի է, նա խիստ պատժել  
չգիտէ: սակայն դաւաճանութիւնն  
անկարող եղաւ տանել:

— Արդա՛ր դատաստան, գոչեցին  
բազէները:

Կտցահարները Արծուի հրամանով  
մերկացրին ագռաւին և բոլոր թռ-  
չունների առաջ ատելով, թքելով  
ու մրկելով դուրս տարան:

Արծիւը նորից շնորհակալութիւն  
յայտնելով Բազէներին և բոլոր  
թռչուններին, հեռացաւ իւր ապա-  
րանքը:

—Արդար դատաստան, գոչեցին  
բոլոր թռչունները նրա ետեից և  
աւելացրին. դաւաճանին մահ, կեցցէ՛  
Արծիւը, կեցցէ՛ թագաւորը:

Իսկ որդիքն աւելացրին. Վեցցէ  
մեր հայրիկը՝:





Սրբուհի Գլխի Է . . 30 Կ.  
Արձուի Դատաստանը Գ. 40 »

---

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

Թիֆլիզ՝ Կենտրոնական գրավաձառա-  
նոցում:

Մոսկուա՝ պ. Մ. Բարխուդարեանի  
տպարանում:

Նոր-Նախիջևան՝ պ. Կարապետ Թիմ-  
րեանի մօտ:

---

Սոյն գրքերի վերաբերեալ որ և է  
գործ ունեցողները պէտք է դիմեն Նոր-  
Նախիջևան պ. Կարապետ Թիմրեանին  
այս հասցեով. Нахичевань на-  
Дону, Директору Общества  
Взаимнаго Кредита Карну  
Владиміровичу Тимрову.



ՀՀ Ազգային գրադարան



NL0585739

